ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը և Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնը, այսուհետ՝ «Կողմեր»,

հաշվի առնելով վիճակագրության բնագավառում համագործակցության զարգացման և երկու պետությունների վիճակագրական մարմինների փոխգործունեության ակտիվացման փոխադարձ շահագրգռվածությունը,

համաձայնվեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

Հոդված 1

Կողմերը կիրականացնեն համագործակցություն հետևյալ ուղղություններով.

1. վիճակագրական մեթոդաբանական մշակումների փոխանակում,
2. վիճակագրական դիտարկումների անցկացման, այդ թվում մարդահամարների, գյուղատնտեսական համատարած հաշվառումների, ինչպես նաև առավել կարևոր հետազոտությունների մեթոդների փոխանակում,
3. միջազգային վիճակագրական ստանդարտների և դասակարգումների գծով փորձի փոխանակում,
4. հայելային վիճակագրության ներդրում, վարում և փոխանակում,
5. վիճակագրական հրապարակումների և տեղեկատվության փոխանակում,
6. վիճակագրական տեղեկատվության տարածման ոլորտում փորձի փոխանակում,
7. վիճակագրական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների բնագավառում փորձի փոխանակում.

8. նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործում փոխադարձ օգնության ցուցաբերում.
9. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների իրականացում.
10. վիճակագրական մարմինների գործունեության նոր ուղղությունների ուսումնասիրության և փորձի փոխանակման նպատակով մասնագետների փոխանակման իրականացում:

Կողմերը՝ սույն Հուշագրին և իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, համագործակցություն կիրականացնեն վիճակագրության բնագավառում և իրենց գործունեության այլ ոլորտներում:

Հոդված 2

Վիճակագրական տեղեկատվության փոխանակումը սույն Հուշագրի շրջանակում կատարվելու է Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

Վիճակագրական տեղեկատվության փոխանակումը կիրականացվի Կողմերի ունեցած կապի միջոցներով, պայմանավորված ժամկետներում՝ ըստ համաձայնեցված ձևերի և ցուցանիշների համակարգի:

Վիճակագրական տեղեկատվության միջգերատեսչական փոխանակման աշխատանքային լեզուն հանդիսանում է անգլերենը:

Հոդված 4

Կողմերը պետք է պահպանեն գաղտնիության հետևյալ կանոնները.

1. Կողմերը համաձայնվում են, որ տեղեկատվությունը, փաստաթղթերը և տվյալները, որոնք դեռևս հրապարակված և տարածված չեն համաձայն Փոխըմբռնման Հուշագրի, չեն բացահայտվի կամ տրամադրվի որևէ երրորդ կողմի, բացառությամբ դրանք տրամադրող Կողմի գրավոր թույլտվության:

2. Սույն Փոխըմբռնման Հուշագրի դադարեցման դեպքում, Կողմերը համաձայնվում են, որ վերոհիշյալ դրույթը կշարունակվի կիրառվել նշված Փոխըմբռնման Հուշագրի շրջանակում փոխանակված տեղեկատվության, փաստաթղթերի և տվյալների նկատմամբ:

Հոդված 5

Կողմերը համատեղ կքննարկեն Հուշագրի մեկնաբանման և իրականացման ընթացքում առաջացած ցանկացած վեճ և անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն դրանք լուծելու ուղղությամբ, որոշ դեպքերում, սույն Հուշագրի իրականացման ընթացքը կքննարկվի պաշտոնական պատվիրակությունների մակարդակով:

Հոդված 6

Սույն Հուշագրի փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ առանձին Արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Հուշագրի անբաժանելի մասը: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Հուշագրի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 7

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և մնում է ուժի մեջ հինգ տարի ժամկետով: Հետագայում այն կարող է երկարաձգվել Կողմերի գրավոր համաձայնությամբ դրա դադարեցումից առնվազն վեց ամիս առաջ: Սույն Հուշագրի դադարեցման համար Կողմերից մեկը ժամկետի լրանալուց վեց ամիս առաջ գրավոր պետք է ծանուցի մյուսին սույն Հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Հուշագիրը ստորագրված է 7 հոդվածներով, քաղաք Երևանում, 2013 թվականի դեկտեմբերի 6-ին, որը համապատասխանում է արեգակնային օրացույցի 15 Ազարի 1392, երկու բնօրինակից, հայերեն, պարսկերեն և անգլերեն լեզուներով, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Տարաձայնությունների առաջացման դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝

Ստեփան Մնացականյան
Նախագահ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի կողմից՝

Ադել Ազար
Տնօրեն

Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոն